№ 37 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 30 1889 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 30 № 37

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի։
Առանձին համարները 7 կօպէկով։

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Բայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով։

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներկայ թւականի զինուորագրութիւնը. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դիւանագիտական ուսում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՒՈՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երևանի նահանգի տնտեսական դրութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ ԹԻԱԿԱՆԻ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ուղարկել է մեզ հետեւեալը տպագրելու համար.

1) Ներկայ 1889 թւի զինուորագրութեան համար Թիֆլիս քաղաքի զինուորակոչական բաժնից քաղաքային վարչութիւնը կազմել է զինուորակոչական ցուցակներ այն անձինքների համար, որոնց քսան տարին լրացել է 1888 թւի ընթացքում, այսինքն որոնք ծնվել են 1868 թւին։ Այդ ցուցակներում նշանագրվում են հետեւեալ տեղեկութիւնները՝ ա) զինուորական ծառայութեան կանչվողի անունը, հօր անունը և ազգանունը կամ մականունը. բ) նրա ծննդեան տարին, ամիսը և օրը. գ) դաւանութիւնը. դ) դասակարգը. ե) պարապմունքը և արհեստը. զ) գրագէտ կամ անգրագէտ լինելը, ինչ ուսումնարանում աւարտելը, կամ ո՞րտեղ նա ուսանում է, և է) կանչվողի ընտանեկան դրութեան վերաբերեալ այն տեղեկութիւնները, որ արտօնութիւններ ստանալու իրաւունք են տալիս։

2) Ցիչեալ զինուորակոչական ցուցակները ներկայ ապրիլի 1-ից մինչև 15-ը հանդէս կը դրվեն քաղաքային վարչութեան չինութեան մէջ, և այդ ժամանակամիջոցում ամենքին թոյլ է տրվում յայտնել ցուցակների մէջ սպրդած պակասորդների և սխալների մասին։ Այդ յայտարարութիւնները կը մտցվեն առանձին գրքի մէջ, եօթը օրվայ ընթացքում կը ստուգվեն եղած գրաւոր ապացոյցների հիման վրա, նաև հարց ու փորձերով կամ ուրիշ միջոցներով, և ցուցակների մէջ յայտնված անճշտութիւնները կուղղվեն։ Այն անձինք, որոնք անց են կացրել յիշեալ երկու չաբաթվայ ժամանակամիջոցը՝ իրաւունք ունեն ցուցակների մէջ մտած պակասորդների և սխալների մասին յայտնել թիֆլիսի քաղաքային զինուորագրական Ատեանին՝ միմիայն այն դէպքում, եթէ կարող կը լինեն ներկայացնել ապացոյցներ, որ ժամանակը անցկացնելու պատճառը առանձնակի և ուշադրութեան կատարելապէս արժանի հանգամանքներ են եղել։

3) Ներկայ 1889 թուի զինուորակոչական ցուցակների մէջ մտցուած անձինք՝ օրէնքով սահմանված արտօնութիւնները ստանալու համար պէտք է խնդիրք ներկայացնեն թիֆլիսի քաղաքային զինուորագրական Ատեանին, սկսեալ մայիս ամսի 1-ից մինչև օգոստոս ամսի 15-ը։ Սոցանից այն անձինք, որոնք կամենում են յետաձգումն ստանալ ուսումը աւարտելու համար՝ պէտք է յայտարարեն այդ մասին քաղաքային զինուորագրական Ատեանին, ներկայացնելով դորա հետ միասին ուսումը չարունակելու վկայական այն ուսումնարանական հիմնարկութեան վարչութիւնից, որի մէջ յայտարարողը ուսանում է, բացատրելով՝ թէ արդեօք զինուորական ծառայութիւնը վիճակով է ուղում կատարել, թէ իբրև կամաւոր։ Զինուորական կոչական ցուցակներում մտցրված բոլոր անձինք վիճակահանութեան են ենթարկվում, բացի քրիստոնէական դաւանութիւնների հոգևորական կոչում ստացածները. թէպէտ զինուորական ծառայութեան կանչվածներից նոքա, որոնց Զինուորագրական Ատեանը ընտանեկան դրութեան վերաբերեալ արտօնութիւն կը տայ՝ ծառայութեան կը նշանակվին այն դէպքում, երբ նորակոչ զինուորների նախապէս որոշուած թիւը լրացնելու համար բաւական չեն լինի վիճակահանութեան կանչված միւս մարդիկը. իսկ ընտանեկան դրութեան առաջին կարգի արտօնութիւն ստացողները՝ դոցա թիւը կը մտցնվեն այն ժամանակ, երբ նորանց ծառայութեան տանելու համար կը կայանայ, զինուորական մինիստրի առաջարկութեամբ, Պետական խորհուրդի բարձրագոյն հաստատված առանձին կարծիքը։

4) Եթէ զինուորական հասակին հասածներից մէկը մտցրված չի լինի զինուորակոչական ցուցակի մէջ և ինքը չի յայտարարի այդ մասին մինչև իր հասակակիցների վիճակահանութեան օրը, նա Զինուորական կանոնադրութեան 158 յօդուածի համաձայն՝ կը զրկվի վիճակ հանելու իրաւունքից և կը մտցնվի ծառայութեան, եթէ դորա համար պիտանի կը լինի։

5) Ով որ ցանկանալով խոյս տալ զինուորական ծառայութիւնից, կամ ցանկանալով օգտվիլ իրան չը տուած արտօնութիւններից՝ գործ կը դնի որ և իցէ խաբեբայական դործողութիւններ՝ նա Զինուորական կանոնադրութեան 353 յօդ. համաձայն, զինուորական ծառայութեան տանվելով՝ կենթարկվի միակեաց բանտարկութեան զինուորական բանտում, երեքից մինչև չորս ամիս ժամանակով։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Մարտի 26-ին

Չակառակ ժողովրդի ցանկութեան՝ անցեալ տարվայ հոգաբարձական ընտրութիւնը չը վերացվեց վ. կաթողիկոսից. ուստի նորից պէտք է հոգաբարձական ընտրութիւն լինի, միայն հոգաբարձուներից երեքը աշխարհական պէտք է լինեն, իսկ երեքը՝ հոգևորական։ Այդ պատճառով թեմիս առաջնորդը թղթեր է ցրել, որով առաջարկում է ազատ կամքով ընտրել 10 պատգամաւոր, որոնց անունները պէտք է գրվեն մի և նոյն թղթի վրա, և մինչև առաջիկայ ապրիլի 5-ը գյուղն եկեղեցիներում գանվող յատուկ արկղների մէջ, որից յետոյ՝ մի որոշեալ օր՝ ձայների առաւելութեամբ ընտրված պատգամաւորները, իւրաքանչիւր եկեղեցուց 10 հոգի, ուրեմն 4 եկեղեցուց ընդամենը 40 հոգի, օրթոդոքսի նախագահութեամբ անեն հոգաբարձական ընտրութիւնը։ Հետևանքի մասին կը յայտնեմ իր ժամանակին։

Ձմեռը անցել է. անցել են և տիֆ ու քոմֆէչ հիւանդութիւնները, որոնք բաւական զոհեր տարան, մանաւանդ գիւղերում։ Սակայն այդ հիւանդութիւնները տեղ են տուել «բկուռույց» վարակիչ հիւանդութեան, թէ քաղաքում և թէ շրջակայ գիւղերում։ Վերջիններս անտէրութեան են մատնված, քանի որ գիւղերը բժշկի խիստ կարօտութիւն են ղգում....

Պրիտաւի ուշադրութիւնն ենք դարձնում այն բազմաթիւ տների վրա, որոնք արտաքնոցի խողովակներ չունեն տարած և որոնց մտտով անցնելիս՝ պէտք է քիթդ բռնես, մանաւանդ ամառը, որովհետև հակառակ դէպքում գլուխդ պտոյտ կը գայ.... Անհերքելի է, որ իրանք տան տէրերը, մինչև որ նրանց չը ստիպեն, չեն հոգայ իրանց մասին, թէև հէնց իրանք էլ զղվում լինեն գարշահոտութիւնից և միջոց էլ ունենան խողովակներ տանելու։

Բարեգործական ընկերութեան Շուշու ճիւղի գրադարան-ընթերցարանը արդէն բացվել է։ Տարեկան վճարը 4 րուբլի է, իսկ ամսականը՝ 50 կօպէկ։ Ընկերութեան անդամները չեն վճարում, այսինքն 5 րուբլի տալով կարելի է անդամ լինել և ընկերութեան և ընթերցարանին։ Կարծում ենք, որ սրանից էժան չէ կարելի։ Ցուսանք, որ ընթերցարանը միջոց կը տայ ընկերութեան անդամների չատանալուն, որի թիւը այժմ ողորմելի է։ Միթէ Շուշին, որ ունի 27000 բնակիչ և որի մեծամասնութիւնը հայեր են, չէ կարող ընթերցարանին 80 կամ 100 անդամ տալ։

Լսում ենք, որ մի պարոն տեղիս նախկին բանտի չինութեան մէջ մտադիր է մի հիւանդանոց հիմնել։ Դա, ի հարկէ, ուրախալի է, բայց չը լինի թէ այդ էլ լոկ խոստում դառնայ, ինչպէս աղբիւրի ջրի քաղաք բերելը, խանքենդ ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեր կարծիքով անհրաժեշտ է մեր երկրի ուսումնարանների մի մասի կազմակերպութիւնը փոխել, եթէ այդ անհնար է, գոնէ նորերը բանալ։ Իբրև գլխաւոր կէնտրօն, պէտք է Երևանում բանալ մէկ ուսումնարան երկրագործական և արհեստագիտական միասին, իսկ գաւառների իւրաքանչիւր կէնտրօնում բանալ երկրին համեմատ երկրագործական մի ճիւղը։ Օրինակ, Նոր-Բայազետում մեծ աջողութիւն կունենայ կաթնատնտեսական մասը. այնտեղ թէ երկիրը հարուստ է արօտատեղերով ու խոտատեղերով և թէ լեռնային լինելով՝ ժողովուրդը պարապում է անասնապահութեամբ։ Նախիջևանի և Սուրմալուի գաւառներում՝ մեծ աջողութիւն կունենան այգեգործական և չերամապահական մասերը, Ալէքսանդրօպոլի գաւառում՝ մեծ աջողութիւն կունենան կաթնատնտեսական և արհեստագիտական մասերը. վերջինին տրամադրված է ինքն ժողովուրդը։

Եթէ բոլոր գաւառներում դժուար կը լինի միանգամից այդպիսի ուսումնարաններ բանալ, գոնէ դժուար չի լինի նահանգի մի յարմար տեղում բանալ կէնտրօնական մի ուսումնարան, որին նիւթապէս օգնեն բոլոր գաւառները նս։

Երևանի նահանգում առնուազն 80 հազար տուն ժողովուրդ կը լինի. եթէ իւրաքանչիւր տուն մի մի րուբլի ուսումնարանական հարկ վճարի և Երևան, Ալէքսանդրօպոլ, Նոր-Բայազետ և Նախիջևան քաղաքներն էլ միջին թւով օգնեն 3—3 հազար րուբլիով՝ մօտաւոր աղբիւրների հետ կը կազմվի մի հիմնաւոր գրամագլուխ—մօտաւորապէս 100 հազար րուբլուց և այնուհետև վստահ կերպով կարելի է ձեռնարկել այդ օգտաւէտ հիմնարկութեանը։

Այդ գործի նախաձեռնութիւնը պատկանում է քաղաքացիներին, մանաւանդ վաճառականներին։ Լաւ կը լինի եթէ երևանցիները քաղաքային ինքնավարութեան և նահանգապետի հետ միասին դիմեն բարձր իշխանութեանը՝ այդ ուսումնարանի համար արքունական հողերից յատկացնելու և թոյլ տրվի գաւառապետների միջոցով մի որոշեալ հարկ առնել ժողովրդից։

Երբ ուսումնարանում երևայիններ փոքրութիւնից գիտութեան հետ միասին ընտելացնեն նաև բահ, բրիչ գործածել, գութան կառավարել, մեղուներ պահել, չերամ պահել, պանիր չինել, այն ժամանակ աշակերտը ուսումնարանից դուրս գալուն պէս զրագրութեան չի դիմի և կհանգի մէջ հաց ճարելու համար չիւար չի մնայ։ Մեզ էլ զարմանք չի թւի, որ Ամերիկայի Հարցիւդ նախագահը երկրի ընդհանուր նախագահութեան բարձր պաշտօնը թողնելուց յետոյ չարունակեց իր առաջվայ համեստ արհեստը,—այն է՝ պարապեց կօչկակարութեամբ։

Պարզ բան է, որ մարդ եթէ փոքրութիւնից ընտելացած լինի երկրագործական քաղցր արհեստին, արդար միջոցով հաց ճարելուն, նա այլ ևս չի դիմի գրչագրութեան և չիւար չի մնայ իրական աշխարհի մէջ։

Ժողովրդի աշխատութիւնը գլուբացնող և արդիւնքը չատացնող միջոցը չատ արագութեամբ է տարածվում, երբ նա հիմնաւոր է։—Երբ եւրոպական գութանը առաջին անգամ մուտ գործեց Սուրմալուի գաւառը, բոլորը ընդունեցին իբրև աւելորդ չոայլութիւն, բայց մէկ տարուց յետոյ ամեն գիւղերում տարածվեց. էրանելու մեքենան առաջին անգամ տեսնելիս բոլորը հեգնեցին ասելով՝ «մեր ձեռքերը լինչ են, որ վարձ տանք մարդիկ»։ բայց երբ գործողութիւնը տեսաւ ժողովուրդը, որ առաջինը չուտ է կատարում գործը և երկրորդ հատիկներ չեն գնում քամու հետ՝ մեծ օրախութեամբ ընդունեցին բոլորը։

Երևանի նահանգում և առհասարակ կովկասում աշխատող ձեռքը քիչ է, ուստի պէտք է այնպիսի միջոցների դիմել, որ քիչ մարդով չատ գործ կատարվի։ Օրինակ մեզ՝ ցանքերի ծածելը. որքան աւելորդ ժամանակ է կորչում, որքան աւելորդ եզ և մարդ տաւար է կերակրվում և որքան մարդիկ են զբաղվում մինչև 2 կամ 3 հազար խուրձ գարի կամ ցորեն են ծածում։ Մեզ յայտնի է արդէն, որ կալի մեքենան երկու մարդու և երկու ձիու օգնութեամբ օրական 500—1,000 խուրձ է ծածում, մի կողմ թողած այն մեքենաները, որ ծածում են մինչև 4,500 խուրձ։ Ալիզամարլուս գիւղի ցանքից հազիւ 30,000 խուրձ «քիւլաչ» դոյանայ։ Եթէ մեքենան օրական ծածի միջին թւով 3 հազար խուրձ, ուրեմն յիշեալ գիւղի բոլոր ցանքը կարելի է ծածել տասօրում. բայց խեղճ ալիզամարլուեցին հազիւ երկու և կէս ամսումն է ծածում իր 3 հազար խուրձը։ Այստեղ ժողովուրդը երկու ամիս աւելորդ կորչող օրերը կը վաստակի և աւելորդ տաւար չի պահի միայն ծածելու համար, որի վրա թէ աւելորդ ծախս է լինում և թէ տանջանք, մանաւանդ այն տեղերում, ուր ամբողջ դաշտերը մշակված լինելով՝ արօտատեղ բոլորովին չը կայ։

Շատերը փորձել են այդ մեքենաներից բերել, բայց բանեցնելու ժամանակ մի հատարակ բան կոտրվել է և այդ չնչին բանի պատճառով ամբողջ մեքենան անդործ է մնացել, որովհետև չինող չը կայ և տէրն էլ ահագին ջնաս է կրել։

Այստեղ նոյնպէս զգացվում է արհեստաւորի պակասութիւնը։

Վեր առնենք մի այլ կողմը.—Սուրմալուի գաւառում բաւական այգիներ կան և չատ մարդիկ ունենում են մինչև 20 կնալատ գինի. բայց ինչ արած, որ Աստուծու այդ պարգևից տէրը կօպէկ էլ օգուտ չէ ստանում. և ահա ինչու.—այստեղ գինին պատրաստում են ամենանահապետական եղանակով, այնպէս որ ոչ մի վաճառական չի վստահանայ գնել այդ և արտահանել, որովհետև երկար պահելու և ճաշակի տէր մարդու ծախելու ապրանք չեն պատրաստում. ճարահատված տէրերը ամբողջ ձմեռ չափազանցութեան են հասցնում խմելը, որպէս զի չը մնայ գարնան և չը փչանայ։ Ես տեսել եմ հետևեալ անմխիթար դէպքը.—չորս հոգի առաւօտեան բաց են արել մէկ կարաս գինի և խմելով մինչև երեկոյ թլիփն են թողել միայն, անդադար բացականչելով՝ «դիփ մէկ է չի ծախվի, խմենք, քէֆ անենք, որ գարնան մնալով չը փչանայ»։ Բացի թլիփը կարասի մէջ գուտ գինի կար 13 լիտր։ Մեր պատմածը թող չափազանցութիւն չը կարծէ ընթերցողը։

1) Երբ երկրի մէջ բացվեն երկրագործական ուսումնարաններ, տեղացի երեխաները սովորեն այդ գիտութիւնները, նրանք այդ ուսումնարանները աւարտելուց յետոյ կաշխատեն հէնց իրանց եֆիկրումն էլ գործ գտնել, օտարութեան չեն դիմի, որովհետև երեխան մեծանալիս, բնութիւնը փոխելու ժամանակ օտարութեան մէջ չի ընվի, օտար երկրի սովորութիւններին չի ընտելանայ, որ չը կամենայ իր մայրենի երկիրը վերաշատնալ։ Այս օգուտը մէկ կողմից։

2) Այդ երկրագործները երբ տարածվեն երկրի մէջ և տեսնեն որ, դիցուք իրանց հայրերի պատրաստած գինին վատ է, կաշխատեն լաւ տեսակի

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՆ

Ուրբաթ, 28 մարտի

ՂԱՎԱԿԱՅԻՆ ԿՈՄՈՒՆ

***

...հատկապես հանդիսավոր էր կոմունի վերջնական հաղթանակի, հեղափոխական ժողովրդավարության հաստատման օրերին։ Ամբողջ Հայաստանի աշխատավոր ժողովուրդը, ոտքի ելած, ջանք ու եռանդ չէր խնայում, որպեսզի ամրապնդի իր նորաստեղծ իշխանությունը, որպեսզի ամրապնդի իր ուժերը, որպեսզի կարողանա ավելի հաջող պայքարել ներքին ու արտաքին հակահեղափոխության դեմ։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՎԱՀԱՆ ՂԱՆԿՏՎԵՂԱՑՈՒ ՎԱՀԱՆ

Կ. Պոլսի «Levant Herald» լրագիրը իր մեկնութեան մէջ կ՚ըսէ, թէ Վահան Ղանկտվեղացու ներկայութիւնը Պոլսոյ մէջ կարելի չէ նկատել իբրեւ պատահական եւ կ՚ենթադրէ, թէ ան Պոլիս եկած է Սահակ Խրիմեան Հայրիկի հետ միասին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու հայ գաղթականութեան մասին տեղեկութիւններ հաւաքելու համար։ Ան կ՚ենթադրէ նաեւ, թէ Վահան Ղանկտվեղացին Պոլսոյ մէջ պիտի հանդիպի Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Կրովըր Քլիվլանտի հետ, որ Պոլիս կը գտնուի իբրեւ ամերիկեան նախագահ Կրանթի անձնական ներկայացուցիչ։

Ուրբաթ օր Վահան Ղանկտվեղացի «Սիլոգրաֆոս» կոչուած հանդէսի մը խմբագրութեան մէջ ներկայացաւ եւ ինքզինքը յայտնեց իբրեւ հրատարակիչ։ Ան ըսաւ, թէ հանդէսը պիտի լոյս տեսնէ ամսական երկու անգամ եւ պիտի ունենայ 32 էջ։ Ան ըսաւ նաեւ, թէ հանդէսին մէջ պիտի տպուին ոչ միայն հայերէն, այլ նաեւ թրքերէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն եւ իտալերէն յօդուածներ։ Ան ըսաւ նաեւ, թէ հանդէսին մէջ պիտի տպուին նաեւ նկար

յոյս ունի աջողեցնել Անգլիայի և Գերմանիայի բարեկամութեան գործը, որի համար նա Լօնդօն է գնացել։

—Բոլոր լրագիրները լի են այն ընդհարման նկարագրութեամբ, որը տեղի է ունեցել Դիւնկիրքընից ոչ հեռու երկու բելգիական չոգենաւերի մէջ, և որի հետևանքն էր սարսափելի աղէտը, այն է չոգենաւերից մինի կատարեալ կոտորածը և բազմաթիւ ճանապարհորդների ծովի մէջ խեղդվելը։ Այդ երկու չոգենաւերն էին՝ «Princesse Henriette» և «Comtesse de Flandre», որոնցից երկրորդը, մարախուղի պատճառով ընդհարվելով առաջինի հետ, անմիջապէս վնասվեց և սկսեց խորասուզվել ծովի մէջ։ Շոգենաւի կապիտանը, ծառայողները և մի քանի ճանապարհորդները խեղդվեցան ծովի ալիքների մէջ։ Այդ չոգենաւի վրա գտնվում էր պրինց Ֆերոմ Բօնապարտ, որը կարողացաւ ազատվել հաստատ մահից։

ԹԱՌՆ ԼՈՒԻԲԵՐ

«Revue des deux mondes» ֆրանսիական ամսագրի այս տարվայ յունվարի տետրակում տպված է Օկտավ Ֆեյլիէի (Octave Feuillet) նոր կոմէդիա, երեք գործողութեամբ «Le divorce de Juliette» (Ժիւլիէտտի ապահարզանը) վերնագրով։ Կոմէդիան գրված է վերին աստիճանի կենդանի ոճով և պարունակում է իր մէջ ապահարզանին առիթ տուող չատ անգամ արդարացի հանգամանքների հոգեբանական նուրբ քննութիւնը։ Պիէսան կարդացվում է մեծ հետաքրքրութեամբ և երևի մեծ ապաւորութիւն է գործել հասարակութեան վրա ներկայացման ժամանակ։ Պիէսան նրանով է վերջանում, որ հաստատ փաստերի վրա հիմնվող ապահարզան պահանջող երիտասարդ ամուսինները՝ նորից հաշտվում են։ Կոմէդիայի մէջ գործող անձանց թւում Րօդ ազգանունով ադվոկատի անձնաւէր տիպը՝ վերին աստիճանի համակրելի է։

* * *

Ֆրէյզինգ քաղաքի լրագիրներից մինում այս օրերս տպվեց հետևեալ յայտարարութիւնը. «Յայտնելով ընդհանուր գիտութեան որ կինս փախաւ, պարտաւորութիւն եմ համարում աւելացնել, թէ այն անձը որը ինձ չետ կը բերի կնոջս, լաւ ծեծ կուտի, իսկ ով որ նրան պարտքով փող կը տայ, ես այդ պարտք տուողի առաջ ոչ մի կերպ ինձ պատասխանատու չեմ համարի»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԿԻԵՎ, 27 մարտի։ Կիեվի մօտ Դնէպրի սառուցը հալվեց. այս օրերս նաւագնացութիւնը կը սկսվի։

ՀՌՕՄ, 27 մարտի։ Ջինուորական մինիստրը խորհրդի երէկվայ նիստում յայտնեց, որ Աբիսինիայի ձեռնարկութեան համար հարկաւոր է 20 միլիօն լիրա, բայց մինիստրական խորհուրդը վճռեց ծախսել միայն 6 միլիօն՝ կերկն և Ասմարա գրաւելու և ամրացնելու համար։

ՓԱՐԻԶ, 27 մարտի։ Սենատի նիստում Լեբուայէ կարդաց սենատից բարձրագոյն դատարան կազմելու որոշումը՝ Բուլանժէին և ուրիշ անձանց դատելու համար։ Այդ դատարանի առաջին նիստը որոշված է որ ուրբաթ օր լինի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ Շաբաթ օր, հեծելազօր գնդի զօրահանդիսից յետոյ, Թագաւոր կայսրը մեծ բարևի ունկնդրութեան ընդունեց Բուխարայի դեսպանութիւնը։ Գլխաւոր դեսպանը Նորին Մեծութեան խորին չնորհակալութիւն յայտնեց չնորհած չքանչանների համար, որոնք թէ իր և թէ դեսպանութեան բոլոր անդամներին կը ծառայեն իբրև անմոռանալի յիշատակ այն ողորմածութեան և հիւրասիրութեան, որ ցոյց տուեցին՝ Թագաւորների Զօրաւոր Թագաւորը, Ռուսաստանի կայսրը, Ողորմած կայսրուհին, Նրա Օգոստափառ Եղբայրները, Չօրեղբայրները և բոլոր աստիճանաւորները։ Թագաւոր կայսրը յանձնարարեց յայտնել էմիրին ողջոյն, և դեսպանութեանը բարի ճանապարհ ցանկացաւ։ Դեսպանութիւնը իր հետ տանում է Բուխարա չատ թանգագին ընծաներ, որոնք նշանակված են էմիրի համար։ Դեսպանութեան անդամները նոյնպէս ստացել են թանգագին ընծաներ։—Մեծ Իշխան Դմիտրի Կոնստանտինովիչին, ծառայութեան մէջ ցոյց տուած առաւելութեան համար, տրվեց բոտմիատրի աստիճան։

ԼՕՆԴՕՆ 28 մարտի։ Ցուլիսին վիլհելմ կայսրը այցելելու է Թագուհուն Օսբօրնում։ Պօրտսմուտում տեղի կունենայ մեծ ծովային զօրահանդէս։—Պատգամաւորների ժողովը հաստատեց նաւաստորմը մեծացնելու բիլլը։

ՕՐԷՕԼ, 29 մարտի։ Օկա գետի սառուցը հալվեց։

ԼՕՆԴՕՆ, 29 մարտի։ «Daily News» լրագրին թէհրանից հեռագրում են, ապրիլի 8-ից (նոր ոճ.), որ պարսկական կառավարութիւնը Ռուսաստանի հետ մի դաշնագիր է կապել, որի զօրութեամբ կէլատ-Նադիր բերդը զիջանվում է Ռուսաստանին։

ԲԵԼԳՐԱԴ, 29 մարտի։ Կառավարութիւնը միտրօպօլիտ Միխայիլին դիմեց, խնդրելով Սերբիա վերադառնալ։

ԲԵՐԼԻՆ, 29 մարտի։ Ջինուորական մինիստր նշանակված է գեներալ Վերդի-դիւ-Վէրնաու, արձակված Բրօնսարի տեղ։

ԳԷՆԻՋԷՍԿ, 29 մարտի։ Այստեղ ժամանեց Էվալդ, որը Պերէկօպեան ջրանցքի մասնակցողներից մէկն է։ Նրա գալու նպատակն է սկզբնական աշխատանքներ սկսել ջրանցք անցկացնելու համար։

ՍՕՖԻԱ, 29 մարտի։ Բաղօսլավով և Իվանօվ նախկին մինիստրները, որոնք մամուլի միջոցով կօռուպցիան պրինցին վիրաւորելու համար դատի էին ենթարկված, մի տարով բանտարկութեան են դատապարտված։ Ցանկօվի կուսակիցները, անհամերկութեան ազդեցութեան տակ, Ֆրանգի փաստաբանին Բելգրադ ուղարկեցին՝ Ցանկօվի հետ բանակցելու յանձնարարութեամբ։ Երբ Ֆրանգի վերադարձաւ Բելգրադ, ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարեց, բայց ոչինչ չը գտաւ։ Ցանկօվեանները, ինչպէս ասում են, պնդում են, որ Ցանկօվ թողնէ իր չեղոք դերը։ Բելգրադի և Բուխարէստի անցքերի պատճառով, կօռուպցիան պրինցը աշխատում է հաշտեցնել մինիստրութեան մէջ ծագած տարաձայնութիւնները։

ՀՌՕՄ, 29 մարտի։ Մասօվայից հեռագրում են, որ Նէգուս մահից առաջ յայտնի նշանակեց իր ազգական Մանգաշիին։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 29 մարտի։ Որովհետև կառարչի հրաժարվեց նոր մինիստրութիւն կազմելուց, թագաւորը մինիստրութեան կազմակերպութիւնը յանձնեց գեներալ Ֆլօրէսկօյին։ Նոր մինիստրութեան մէջ, ըստ երևոյթին, կը մանի Թօչմտիի մինիստրութեան անդամների մի մասը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ
Մարտի 28-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժ.—	. .	93	35
Բերլինի վրա 100 մարկ —	. .	45	65
Փարիզի վրա 100 ֆրանկ —	. .	36	80
Ոսկի — արժէք —	. .	7	43
Մաքսային կուպօններ —	. .	148	75
Արծաթ — — —	. .	1	12
Բօրսային վեկսէններ —	.	5¼ և 6½%	
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի		99	12
— — — — 2-րդ —		99	25
— — — — 3-րդ —		99	—
— — — — 4-րդ —		99	—
— — — — 5-րդ —		99	62
— — — — 6-րդ —		99	—
Նոր 4%		84	25
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.		99	62
— — 2-րդ —		99	75
— — 3-րդ —		99	87
Ներքին 5% առաջին փոխառութ.		270	—
— երկրորդ —		242	50
5½% բէնտա		102	—
Ոսկեայ բէնտա		—	—
Նոր երկաթուղային բէնտա		99	37
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.		143	12
— — թղթադ.		93	—
Գրաւ. թղ. Աղնւ. բանկի		98	25
Գիւղական բանկի		102	—
5½% գրաւական թղթեր խերսոնի կալուած. բանկի,		99	37
6% գրնա. թղ. խարկովի կալ. բան.		101	37
— — Թիֆլիսի—27 և 43տ.		—	—
— —Ռուբայիսի-18 և 43տ.		—	—
Վ. օլժսկօ-Կամսկի բանկի ակցիաները		732	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		375	—
Րիբինսկ-Բոլոգօվի ընկ.		91	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ		94	37
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ		94	25
Օդէսայի — —		95	25
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.		—	—

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնն բաւական ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԶՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՒՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (ևատամնացաւի), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի։

ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11¼—12 ժ. կանանց և երեխայոց ց.

ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։

ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքչաթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.

ԿԱՐԱՊՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.

ՓՈՒԼԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա)։

ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—6½—7½ ժամ.

Հիւանդանոցումն է մանկաբարձուհիք Մօզեր և Երանեան։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՀՕԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ համաձայն սրանով հրաւիրում եմ կուկիայի ս. Աստուածածին ԹԱՆԴՈՑԵԱՆ եկեղեցու մեծապատիւ ծխական ժողովրդին ընտրել նոյն եկեղեցի կիրակի (Թաղկազարդի օրը), ԱՊՐԻԼԻ 2-ին, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 12½-ին, կատարելու ԹԱՆԴՈՑԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՑՓՈԽ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՕԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ս. պատարագից յետոյ։

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցիների Հայոց Հաւլաբարի՝ Աշոտ քահանայ Թէմուրազեանց։

1—2

ВОЛЬШАЯ ПРЕДПРАЗНИЧНАЯ

РАСПРОДАЖА

ТОЛЬКО ВЪ ТЕЧЕНІЕ МАЛАГО ВРЕМЕНИ

Кѣнтрольная галантерейная магазинъ въ Эриванѣ противъ Армянской церкви, уголъ Большой Полевой и Екатерининской.

Всѣ товары галантерейные, модные и шелковые.

Перчатки, кружева, вуали, зонтики, шелковые матеріи, бархаты, ленты, шарфы, воротнички, рюши, бантики, шляпы, чулки, бѣлье, корсеты, платки, шали, шерстяные матеріи, гарусы, шерсть, вышивки, шелкъ, нитки, иголки, булавки, пуговицы, гребенки, духи, помада, пудра, румяны, мыло, одеколонъ, шпильки, запонки, браслеты, цѣпочки, часы, портсигары, портмонэ, сумки, ридикюли, бисеръ, игрушки, альбомы, фотографическіе аппараты, пластинки, фонографы, граммофоны, музыкальные инструменты, ноты, книги, перья, карандаши, бумага, конверты, записныя книжки, чернила, клей, сургучъ, печати, штемпеля, краски, кисти, ножницы, ножи, ложки, вилки, ножи для разрѣзанія книгъ, ножи перочинные, ножи для бритья, ремни, бритвы, точильные камни, кисти для бритья, мыло для бритья, помазки, щетки, гребни, зеркала, ширмы, ковры, коврики, портьеры, гардины, обои, бордюры, клеенки, подушки, одѣяла, простыни, наволочки, полотенца, скатерти, салфетки, матеріи для мебели, шелковые матеріи, бархаты, ленты, шарфы, воротнички, рюши, бантики, шляпы, чулки, бѣлье, корсеты, платки, шали, шерстяные матеріи, гарусы, шерсть, вышивки, шелкъ, нитки, иголки, булавки, пуговицы, гребенки, духи, помада, пудра, румяны, мыло, одеколонъ, шпильки, запонки, браслеты, цѣпочки, часы, портсигары, портмонэ, сумки, ридикюли, бисеръ, игрушки, альбомы, фотографическіе аппараты, пластинки, фонографы, граммофоны, музыкальные инструменты, ноты, книги, перья, карандаши, бумага, конверты, записныя книжки, чернила, клей, сургучъ, печати, штемпеля, краски, кисти, ножницы, ножи, ложки, вилки, ножи для разрѣзанія книгъ, ножи перочинные, ножи для бритья, ремни, бритвы, точильные камни, кисти для бритья, мыло для бритья, помазки, щетки, гребни, зеркала, ширмы, ковры, коврики, портьеры, гардины, обои, бордюры, клеенки, подушки, одѣяла, простыни, наволочки, полотенца, скатерти, салфетки, матеріи для мебели.

Всѣ товары галантерейные, модные и шелковые.

Перчатки, кружева, вуали, зонтики